

Ի հարկէ դժուար էր որ ձեմարանը այն դրութեան հասցնէր, որ սորա ուսումնաւարտները յօժարութեամբ դիմէին վանական կոչումն ընդունելու. քանի որ այդ կատարուած իրողութիւն է արդէն, մեզ կմնայ ամենայն վստահութեամբ գործել և սիրելի է յուսալ, որ մեր գործը, ինչ հանգամանքներովմէջ էլ որ լինի ձեմարանը, յաջողութեամբ կպոսկուի:

Հայցեմք Ամենաբարձրեալից, որ երկարացնէ Նորին Արքութեան Վեհափառ Հայրապետի կեանքը, որպէս զի Նորա Հայրապետական հովանոյ տակ, աջակցութեամբ Մայր Աթոռոյս միաբանութեան բոլոր անդամոց և օժանդակութեամբ համայն Հայոց ազգի՝ Հոգևոր ձեմարանս շատ տարիներ խաղաղ և արդիւնաւոր ընթացք ունենայ:

Տեսաւ Ճեմարանի ԱՐՇԱԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ.

1888 ամի 24 Սեպտեմ.

Ի Ս. Էջմիածին.

## ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐԲ

ԵՒ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՀԱՆԳԻՍԱԿՐԵՒՔ.

Այս վտեմ օրուան շքեղ հանդէսը կրկին և կրկին անգամ ապացոյցանում է թէ որքան նուիրական պիտի լինին միշտ ամէն մի անկեղ՝ հայի համար, որքան մօտ մեր ամենիս սրտին այս հոյակապ հաստատութեան Երջանկայիշատակ Հիմնադրի այն խորհուրդն ու նպատակը, որ այսօր արդէն 14 անգամ միացնում է մի այսպիսի հոգևոր գերդաստան այս պատկառելի յարկի տակ:

Ի՞նչ էր արդեօք այդ խորհուրդը. ո՞չ ապաքէն այն, որ աւանդաբար դարէ դար անցնելով հասել է մեր օրերը, որ հայի պատմական կեանքի գրեթէ մեծագոյն մասի հիմնաքարն է եղել, որով պայմանաւորուել են մեր ազգային ինքնաճանաչութեան պանծալի յաղթանակները և այն բոլորը, որով մինք այսօր մեզ իրաւունք ենք համարում պարծենալու:

Մի գաղափար, որ Լուսաւորչից սկսած՝ Մեծին Ներսիսի, Սահակոյ, Մեսրոպայ և ոսկեդարու մտաւոր շարժման բոլոր առաքեալների աշխարհաշէն գործունէութեան հիմքը լինելով, ոգևորել է այնուհետև Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր սրտացաւ Հայրապետներին ու ազգի պետերին, որ փրկել է հային՝ բաղդի չարանենգ հարուածների ու սուկալի չարիքների երեսից, որ միմիայն կսրողացել է մեր ազգի գոյու-

Թիւնը պահպանել մինչև լուսաւոր դարուս վերջը, — մի այսպիսի դաղափար անշուշտ և այսօր մեր բոլոր հոգեւոր գործունէութեան ոգի ու ուղղութիւն տուողը, մեր բոլոր ձգտումների նպատակը պիտի լինի:

Ո՞չ այսօր կարող է ուրանալ որ հայ ազգն և Հայաստանեայց սուրբ Եկեղեցին անքակտելի կապով կապուած՝ մի անբաժան միութիւն պիտի կազմեն, ինչպէս միշտ են եղել. որ երկուսի գոյութիւնն էլ փոխադարձաբար պայմանաւորվում են միմիանցով. Եկեղեցին է եղել միշտ մեր պատմական կեանքի ալէծուփ ծովի գոռ փութորիկների երեսից ազատ մնալու միակ նաւահանգիստը. Եկեղեցին է եղել միշտ, որ արձակել է Հայաստան աշխարհի այս ու այն խռովեալ ծայրերը աւետարներ աղանին՝ խաղաղութեան ձիթենին կտցին. Եկեղեցին է եղել, որտեղից սիրոյ հրեշտակը գուրս գալով լուսափետուր թևերը տարածել է տգիտութեան ու ներքին անընդհատ գժտութեանց խաւարի մէջ խարխափող երկրի վերայ:

Այս է մեր գոյութեան պատմական, դարերով սրբագործուած պայմանը, — իսկ պատմական օրինաց դէմ զնալ անպատիժ կերպով չէ կարող և ոչ մի ազգ: Ահա ուրեմն և այսօր մեր նշանաբանը՝ Մի Հայաստանեայց ազգային Եկեղեցի, որի վրայ է մեր յոյսը, որից պիտի ծագէ և դէպի փրկութիւն առաջնորդող լոյսը:

Բայց Եկեղեցին վէմով չէ եկեղեցի. Եկեղեցին խորհուրդ ունի միայն ճշմարիտ Բրիտոսական սիրով տոգորուած, ճշմարիտ հաւատոյ լուսով պայծառացած՝ փութալան ուսուցիչներով, որոնք վարդապետէին Փրկչի աւանդած աստուածային բանը, որ իսկական առաջնորդ լինելով սիրոյ և լուսոյ՝ իրանց անձը միշտ պատրաստ լինէին դնելու իրանց բանաւոր հօտի համար:

Այս է մեր զէնքը, այս է մեր փրկութեան ուղիղ ձանապարհը, այս է այսօր մեր միակ նպատակը, և այս վսեմ խորհուրդը լցուցանելու համար է որ Երջանկայիշատակ Գեորգ Գ. Հայրապետը անդուլ ջանքով աշխատեցաւ և գլուխ բերեց այս պատկառելի հիմնարկութիւնը, որի տարեդարձը տօնելու համար այսօր խանդաբին սիրով ու բաղձանքով ժողովուած ենք այստեղ:

Ի՞նչ աւելի խորհուրդ, աւելի բարձր նպատակ կարող է լինել մի հաստատութեան համար, քան մի ամբողջ ազգի հոգեւոր առաջնորդներ, ճշմարիտ գիտութեան լուսով զինուորուած հովիւներ պատրաստելը և ո՞ր աւելի խորհուրդ պիտի ունենար այդպիսի մի հիմնարկութիւն, եթէ ոչ Մայր Աթոռի ծոցում, որի վրայ են ուղղուած ակնկալութեամբ բովանդակ հոյ ազգի աչքը, որից ամէն բան է սպասում նա, Եւ մենք տեսնում ենք որ Հայաստանեայց Աթոռը իւր սրբազնասուրբ Պետով ամենաքնքուշ խնամատարութեան առարկայ է դարձրել այս տաճարը, ոչինչ ջանք չինայելով նորա յառաջագիմուութեան և յարատեւութեան համար, Մի ազգ, մի Եկեղեցի, մի բարձրագոյն ու գիտութեան տաճար (մի՛ գոնէ առ այժմ) — ահա թէ ի՞նչ պիտի միշտ ունենանք աչքի առաջ, ահա թէ ի՞նչ միշտ ան-

ընչ կերպով տպաւորուած պիտի լինի մանաւանդ նոցա սրտում, որոնք վայելել են և վայելում են այդ նուիրական երեք սրբութեանց մայրական խնամքն ու հոգատարութիւնը: Թող չմոռանան նորա թէ ո՞ր չափով երախտապարտ են այս շնորհատու հաստատութեանը, չմոռանան թէ ինչ ծանր, քայքայ և քաղցր պարտականութիւն կայ իրանց վրայ— իրանց բոլոր ցոփերով, հոգով և մարմնով ձգտելու դէպի սորա մտեմ նպատակը: Եւ միայն այն ժամանակ, երբ ճեմարանիս սաները քաջ կ'ըմբռնեն թէ այս մի քաղցր լուծ է որ դնում են նոցա վրայ Ազգն ու Եկեղեցին, մենք կարող կը լինինք ասել թէ, իրաւի, այս համազգային հաստատութեան վրայ գործ դրուած ջանքերը ի դերև չեն ելանում:


Այս տեղ, այս հինաւուրց Ս. Տաճարի հովանու տակ, այլևոր Մասեաց ստորոտում, մի վայրկեան յետ նայենք և տեսնենք մտաւոր աչքով, թէ ինչ է կատարուել դարերի ընթացքում այս հողի վրայ, ուր մենք ենք այժմ կանգնած՝ նայենք թէ ինչ աղէտայի տեսարանների վկայ է եղել այս մեզ համար պատմական սրբութիւն դարձած դաշտը. տեսնենք ինչ տեղից ենք եկել, ուր պիտի գնանք և ինչ ճանապարհով:

Եւ հաւատանք որ կը գայ մի օր, երբ Անուշաւանի նուիրական սօսիքը նորից մեղմիկ կը շշնչեն, Չէ՛ մեռած չէ, դեռ կենդանի է այս չարատանջ ազգը, կենդանի էլ, օրովհետև յառաջագիմութեան ընդունակ մի ազգ մեռնել չէ կարող:

Մաղթենք ուրեմն ի սրտէ որ միշտ հաստատուն, միշտ պայծառ ման մեր սիրեցեալ Ազգն ու Եկեղեցին. կեցցէ՛ Մայր Աթոռն ու Վեհափառ Հայրապետ, Կեցցէ՛ Ճեմարան:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,

1898 ամի  
Սեպտեմբերի 24  
Ս. Էջմիածին:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԵՐ:

Անցեալ Սեպտեմբերի 3 ին Մայրաքոյն Պատրիարք Կաթուղիկոսը կսնդակով հաղորդեց Էջմիածնի Սինօզին, որ ինքը մրտադիր է Տեառն օգնականութեամբ Սեպտեմբեր ամսի 11 ին ուղևորել դէպի Թիֆլիզ և յանձնեց Սինօզին կարևոր կարգադրութիւններն անել առ այն: Սինօզը նայն օրը կազմելով Վեհափառ Կաթուղիկոսի ճանապարհորդութեան ուղեցոյցը՝ ուղարկեց Կոյկասի Կառավարչապետի գլխանատան Պ. Կառավարչին տնօրինելու որ ինչ հարկն է, և այս ուղևորութեան